

ԳՈՐԾԱԴԻՐ

ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ ԿՆԵՐԿԱՅՆՎԻ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ



Փետրվարի 19-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որի օրակարգում ընդգրկված էր 11 հարց, այդ թվում՝ ներդրումային հիմնադրամի օրինանախագիծը:

հետագա զարգացման համար:
- Հիմնադրամների մասին օրենքի վրա աշխատանքը տեւեց մոտ չորս տարի, եւ այն ավարտվեց հաջողությամբ: Կարելի էր այն է, որ հիմնադրամների մասին օրենքը մեծ կարեւորություն ունի կապիտալի շուկայի հետագա զարգացման համար: Այս շուկայի զարգացումը միակ եւ ամենաարդյունավետ հնարավորությունն է տնտեսության մեջ ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման համար: Այսօր մենք ավարտել ենք աշխատանքը, եւ համապատասխան օրինագիծը կուղարկվի խորհրդարան,- ասաց վարչապետը:
Նրա խոսքով, նշված օրենքի ընդունումը եւս առաջ արված մեկ քայլ է:

Նիստի մեկնարկին վարչապետը նշեց, որ կառավարությունն ավարտել է աշխատանքը ներդրումային հիմնադրամների մասին օրինագծի վրա, եւ այն կներկայացնի խորհրդարանին:
Նրա պարզաբանմամբ, հիմնադրամների մասին օրենքը անհրաժեշտ է կապիտալի շուկայի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԶԻԼ ԹԱԼԱԿՎԱԶԵ. «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ԲՈԼՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Փետրվարի 18-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, օրենսդիր մարմնի լիազումար նիստում, հանդես եկավ խորհրդարանի մեկանյա գործունեության հաշվետվությանը: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, զործադիր իշխանության, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:



ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ՝ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Խորհրդարանի մեկանյա աշխատանքի արդյունքները հանրագումարելիս՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն հայտարարեց, որ օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքները արդարացի եւ իրա-

վական դատարանի ստեղծման լուրջ հիմքեր դրեցին, որոնք երկրի զարգացման հիմնարար նախադրյալներ են: Նրա խոսքով, դատարանի գործունեության վիճակագրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիների եւ պետական վարչության միջեւ վիճելի հարցում ընդունված որոշումների թիվը արդեն հավասարակշռվել է, իսկ եվրադատարան ներկայացրած հայտերի թիվը նվազել է 60 տոկոսով: Արչիլ Թալակվաձեի հավաստմամբ, դատական համակարգի բարեփոխման չորրորդ (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐ

«ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ



Ինչպես արդեն հաղորդել ենք, ընտրական օրենսգրքի նոր տարբերակի մշակման հարցով, կառավարող «Վրացական երազանք» կուսակցության եւ միացյալ ընդդիմության միջեւ բանակցային գործընթացը հայտնվեց փակուղու մեջ: Հարցի կարգավորման նպատակով, «Վրացական երազանք» կուսակցությունն ընդդիմադիր կուսակցություններին առաջարկեց առանձին-առանձին հանդիպումներ ու ընտրական համակարգի վերաբերյալ բանակցություններ ունենալ:

Ինչպես հայտարարեց «Վրացական երազանքի» գլխավոր քարտուղար Կախաբաձե Վալերիան, Վրաստանի խորհրդարանի կողմից հրաժարվելը վնաս է մեր երկրի համար, ասաց Կախա Կալաձեն եւ հավելեց, որ ընդդիմության քայլը կվնասի ինչպես ընդդիմությանը, այնպես էլ ողջ երկրին: Նա քաղաքական հակառակորդներին կոչ արեց հնարավորինս շուտ վերադառնալ բանակցությունների սեղանին:

- Եթե համաձայնության գանք սահմանադրապես, (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

խա Կալաձեն, երկխոսությունը պարտադիր է, ինչի համար «Վրացական երազանքը» պատրաստ է, եւ պարտադիր չէ, որ բոլոր կուսակցությունները միասին լինեն հանդիպման ժամանակ:
- Իշխող կուսակցության հետ սկսած երկխոսու-

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԿԱՅԱՑԵԼ Է ՓԱՇԻՆՅԱՆ-ԱԼԻԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄՅՈՒՆԻՏԵՆՈՒՄ

Մյունխենում, 56-րդ անվտանգության միջազգային համաժողովի շրջանակում, կայացավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը:



Երկկողմ հանդիպումից հետո, երկու երկրների ղեկավարները մասնակցեցին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ քննարկմանը: Քննարկման համակարգողը ԱՄՆ-ի ռուսական հիմնադրամի նախագահ եւ գլխավոր գործադիր տնօրեն Սելեստա Վալանդերն է: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻՆ

Փետրվարի 14-ին Վրաստանի արդարադատության առաջին փոխնախարար Միխեիլ Սարջվելաձեն հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի արդարադատության փոխնախարար Վահե Դանիելյանի հետ:



Հանդիպմանը Միխեիլ Սարջվելաձեն հայ գործընկերները ներկայացրեց արդարադատության, մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային սպասարկումների մատուցման ուղղությամբ Վրաստանի փոր-

ՈԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ՝ ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Փետրվարի 19-ին Վրաստանի Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմեր Չաչիբախան հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանի հետ:



Պաշտոնական հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ պաշտպանական համագործակցության խորացմանը, ռազմական կրթության ու ռազմական բժշկության ոլորտում համագործակցությանն առնչվող հարցեր: Վլադիմեր Չաչիբախան իր գործընկերոջը ներկայացրեց վրացական պաշտպանական ուժերում շարունակվող բարեփոխումները: Հայաստանի Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը այցելեց Թբիլիսիի հերոսների հրապարակ եւ ծաղկեպսակ դրեց Վրաստանի անկախության համար գոյվածների հուշահամալիրին: Երկօրյա այցի ընթացքում, Հայաստանի Զինված ուժերի պատվիրակությունն այցելեց նաեւ Կրծանիսիում գտնվող JTEC ուսումնական կենտրոն:

ՀԱՄԱԺՈՂՎ

ԳԻՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄՅՈՒՆԻՏԵՆՈՒՄ ՀՍՏԱԿ ԵՐԵՎԱՅ ՎՐԱՍԱՆԻ ԴԵՐՈ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔԱՏՈՒՄ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Գիրգի Գախարիան եւ նրա գլխավորած Վրաստանի պատվիրակությունը, որի կազմում էին փոխվարչապետ, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին եւ պաշտպանության նախարար Իրակլի Դարիբաշվիլին, Մյունխենում մասնակցեցին 56-րդ անվտանգության միջազգային համաժողովին:

Համաժողովի շրջանակներում, վարչապետն անցկացրեց մի շարք երկկողմ հանդիպումներ: Գերմանիայից վերադարձին, հանրագումարելով Մյունխեն կատարած այցի արդյունքները, Գիրգի Գախարիան հայտարարեց, որ Մյունխենի անվտանգության համաժողովին լավ երեսաց Վրաստանի աճող դերը եվրոպական անվտանգության ճարտարապետության եւ

Սեւ ծովի անվտանգության համատեքստում:

Վարչապետի զննատանձր, ամենակարեւոր հանդիպումը կայացել է ԱՄՆ պաշտպանության քարտուղար Մարկ Եսպերի հետ, որի ընթացքում մանրամասն քննարկվել են ինչպես անվտանգության ոլորտում երկկողմ համագործակցությունը, այնպես էլ պաշտպանության ոլորտում համատեղ նախագծերը:



ՎՐԱՍԱՆ - ԱՄՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Փետրվարի 20-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Քրիս Սոչան:

Այցի շրջանակներում, նա հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիրգի Գախարիայի, կառավարության մյուս անդամների, քաղաքա-

կան կուսակցությունների ղեկավարների, տեղական եւ միջազգային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ու քն-

նարկումներ կատարել Վրաստանում առկա քաղաքական իրավիճակի շուրջ:

Վարչապետի հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին ԱՄՆ-ի աջակցությունը Վրաստանի ինքնիշխանությանը եւ եվրատլանտյան ծագումներին, ինչպես նաեւ եր-

կու երկրների միջեւ ռազմավարական գործընկերության խնդիրները: Բացի այդ, կառուցողական երկխոսություն կայացավ Վրաստանում ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանն ուղղված շարունակական ջանքերի վերաբերյալ:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԵՐ

ԻՐԱԿԼԻ ՇՈԹԱԶԵՆ ՆՈՐԻՑ ՀԱՍՏԱՏՎԵՑ ՎՐԱՍԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ



Փետրվարի 18-ին Վրաստանի խորհրդարանը՝ պատգամավորների 82 կողմ եւ 7 ձեռնպահ ձայներով, Վրաստանի գլխավոր դատախազի պաշտոնում հաստատեց երկրի դատախազության խորհրդի կողմից ներկայացված 37-ամյա Իրակլի Շոթաձեի թեկնածությունը:

Քվեարկությունը գաղտնի էր: Ընդդիմությունը բոյկոտել էր խորհրդարանի լիազուրկ միստը եւ մեծամասնության պատգամավորների համար խորհրդարանի շենքի մոտ «ամոթի միջանցք» էր կազմակերպել: Քվեարկության գործընթացը բոյկոտեց նաեւ «Վրացական երազանք» կուսակցությունից դուրս եկած

անկախ պատգամավորների խմբակցությունը: Հիշեցնենք, որ առաջին անգամ Իրակլի Շոթաձեն գլխավոր դատախազ էր հաստատվել 2015-ի նոյեմբերին, սակայն 2018 թվականի մայիսին նա, Թբիլիսիի դպրոցներից մեկում զանգվածային ծեծկռտուքով երկու դեռահասի սպանության հետաքննության արդյունքում առաջացած հասարակական բողոքի եւ ցույցե-

րի արդյունքում, պաշտոնաթող եղավ: Ավելացնենք, որ Իրակլի Շոթաձեն աշխատել է Վրաստանի գլխավոր դատախազությունում 2006- 2010 թթ.: Այնուհետեւ, աշխատանքի է անցել Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայություն, իսկ 2013-ին վերադարձել գլխավոր դատախազություն եւ ստանձնել վարչության պետի տեղակալի պաշտոնը:

ՎԱԽԹԱՆԳ ԳՈՄԵԼԱՌԻՐԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Փետրվարի 19-ին Վրաստանի վարչապետ Գիրգի Գախարիան, կառավարության միստում հայտարարեց, որ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնը կզբաղեցնի Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրին:

Անվտանգության խորհուրդն անչափ կարեւոր մարմին է առանձնապես այսօր եւ պետք է գործի արդյունավետ: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ներկայացնում են Անվտանգության խորհրդի նոր քարտուղարին: Նոր քարտուղարը ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրին է: Պարոն Վախթանգին շնորհավորում են այս կարեւոր եւ պատասխանատու պաշտոնում, իհարկե, համատեղության կարգով նշանակվե-

լու առիթով,- հայտարարեց Գիրգի Գախարիան: Նշենք, որ Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնը մինչ այդ զբաղեցնում էր Լեւան Իզորիան, ով այդ պաշտոնից հեռացավ մի քանի շաբաթ առաջ: Նա նշանակվել է Գերմանիայում Վրաստանի դեսպան:



ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՎՐԱՍԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նշեց, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ տարբեր ոլորտներում համագործակցությունն արդյունավետորեն է անցնում: Փոխնախարարի խոսքով, առանձնակի նշանակալից ձեռքբերումներ են վավերացվել արդարադատության ոլորտում:

Միխեիլ Սարջվելաձեն հայ գործընկերոջը ներկայացրեց նաեւ Վրաստանի արդարադատության նախարարության առաջնահերթությունները, որոնց թվում են պետական ինստիտուտների թափանցիկությունը, օրենքի գերակայության ապահովումը, խտրականության եւ կոռուպցիայի դեմ պայքարը: Մանրամասն խոսակցություն եղավ Վրաստանում իրականացվող բարեփոխումների մասին, ինչը հայկական կողմի համար բացառիկ ուշադրության առարկա է:

Հայաստանի արդարադատության փոխնախարար Վահե Դանիելյանը հետաքրքրվեց Արդարադատության տների


եւ հասարակական կենտրոնների գործունեությամբ: Միխեիլ Սարջվելաձեն հյուրին ներկայացրեց վիճակագրական տվյալները եւ ասաց, որ Վրաստանում արդեն գործում է Արդարադատության 24 տուն եւ հասարակական 75 կենտրոն: Ի տարբերություն խոշոր քաղաքներում գործող Արդարադատության տների, հասարակական կենտրոնների գործառույթն ուղղված է մուցիցիպալային կենտրոններից հեռու գտնվող բնակավայրերի բնակիչներին սպասարկումների մատուցմանը:

Բարեփոխումների ուղղությամբ վրացական փորձի ուսումնասիրությունից հետո, Հայաստանի արդարադատության փոխնախարարը հույս հայտնեց, որ Վրաստանի օրինակով նման մատչելի եւ սպառողներին կողմնորոշված համրային սպասարկումների մատուցման կենտրոններ կբացվեն նաեւ Հայաստանում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել արդեն իսկ ձեւավորված գործընկերային եւ ջերմ համագործակցություն-

ը, մասնավորապես, ջանքեր գործադրել վրացական փորձը Հայաստանում տեղայնացնելու ուղղությամբ:

Նույն օրը Հայաստանի արդարադատության փոխնախարար Վահե Դանիելյանը Հայաստանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության ղեկավար Անի Մխիթարյանի հետ եղավ Թբիլիսիի Արդարադատության տանը եւ Սցխեթայի մուցիցիպալիտետի Մուխրանի գյուղում գործող հասարակական կենտրոնում, որտեղ մանրամասն ծանոթացավ պետական սպասարկումների մատուցման կարգին:

Հիշեցնենք, որ դատաիրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված է ստեղծել «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող որոշ ծառայությունների միասնական կենտրոն՝ հագեցած էլեկտրոնային սարքավորումներով:



ՈՒԿՐԱԻՆԱ ԴՈՆԲԱՍՈՒՄ ՎԵՐԱԿԱՎԵՑԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Ուկրաինայի հարավ-արեւելքում, Դոնբասում վերսկսվեցին ռազմական գործողությունները: Ուկրաինական լրատվամիջոցների տեղեկատվությամբ, Դոնբասի ինքնահռչակ հանրապետության զինված ուժերը, ռուսական կողմի աջակցությամբ, փորձել են ճեղքել երկրի պաշտպանական ուժերի ճակատը: Երկու կողմից էլ կան զոհեր:

Ուկրաինական կողմի հավաստմամբ, անջատողականները օգտագործել են Մինսկի համաձայնագրով արգելված զինմիջոցները:

Ինչ վերաբերում է զոհերին, ապա Ուկրաինայի Ձինված ուժերում կան մեկ զոհ եւ հինգ վիրավոր: Հակամարտող կողմի զոհերի թվի մասին տեղեկատվություն չկա:

ՍԻՐԻԱ ՆԱՏՕ-Ն ԹՈՒՐԻԱՅԻՆ ԶԻ ՊԱՇՏՊԱՆԻ

Սիրիայի Իդլիբ նահանգում սիրիական բանակի դեմ Թուրքիայի զինված ուժերի կողմից ծավալված մարտական գործողությունները լուրջ տագնապ են առաջացրել: Իր մտահոգությունն է հայտնել ՆԱՏՕ-ն: Ալյանսի պաշտոնական հաղորդագրության համաձայն, ՆԱՏՕ-ն մտադիր չէ ռազմական աջակցություն ցուցաբերել Անկարային Սիրիայի հյուսիսում Թուրքիայի գործողության դեպքում: ՆԱՏՕ-ի երկրները չեն պաշտպանի Հինգերորդ հողվածի ակտիվացումը փետրվարի սկզբին Իդլիբում թուրք զինվորականների զոհվելու պատճառով: ՆԱՏՕ-ն չի քննարկում Թուրքիային ռազմական օգնություն տրամադրելու հնարավորությունը այդ տարածաշրջանում գործողություն սկսելու դեպքում:

Նշենք նաեւ, որ Մոսկվան նույնպես զգուշացրել է Անկարային:

ԼԻԲԻԱ ՈՉՆՉԱՑՎԵԼ Է ՁԵՆՔՈՎ ԲԵՌՆՎԱԾ ԹՈՒՐԲԱԿԱՆ ՆԱԿԸ

Լիբիական ազգային բանակի ներկայացուցչի հայտարարությամբ, Տրիպոլիի նավահանգստում ոչնչացվել է թուրքական նավ: Հայտարարության համաձայն, նավը «տեղափոխում էր զենք ու զինամթերք, որը նախատեսված էր զինված խմբավորումների համար»: Ձենքով բեռնված նավը ժամանել էր Թուրքիայից, ինչը խախտում է միջազգային պայմանավորվածությունը, որի համաձայն, արգելվում է զենքի մատակարարումը Լիբիային: Նշենք, որ Տրիպոլիի նավահանգիստը ենթարկվել էր զնդակոծման:

Լիբիայում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Հասան Սալամեն հաստատեց Տրիպոլիի նավահանգստի զնդակոծման փաստը՝ հայտարարելով զենքի մատակարարման բռնարգելքի խախտումների, ինչպես նաեւ Լիբիա օտարերկրյա զինյալների փոխադրման փաստերի մասին:

ԶԻՆԱՍՏԱՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ՆԱԳԱՆՋՈՒՄ Է

Փետրվարի 20-ի դրությամբ, Չինաստանում կորոնավիրուսից մահացած անձանց թիվը հասել է 2218-ի, բուժվել է ավելի քան 16 100 մարդ: Վարակահիւրների թիվը գերազանցում է 74 500-ը:

Չինաստանի առողջապահության գերատեսչության տեղեկությամբ, վերջին 24 ժամերի ընթացքում կորուկ կրճատվել է վարակահիւրների թիվը: Բացահայտվել է կորոնավիրուսով վարակվելու 394 դեպք: Մահվան եւ վարակվելու դեպքերի մեծ մասը գրանցվել է Հուբեյ նահանգում:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԲ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՊԻՍԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)


կան փոփոխությունների շուրջ եւ որոշ փոփոխություններ կատարենք, ապա հնարավոր է ավելի շուտ պայմանավորվածություն ձեռք բերել ընդդիմության հետ: Ժամանակն է, որ նշենք պետք է հնարավորինս շուտ հասնել համաձայնության, ասաց Կալաձեն:

խոսությունից, երբ ձեռք բերվեց ընդդիմության առաջնորդներից Գիգի Ուզուլավային: Հիշեցնենք, որ փետրվարի 10-ին, Վրաստանի Գերագույն դատարանի որոշմամբ, 3 տարի եւ 2 ամսվա ազատազրկման դատապարտված Թբիլիսիի նախկին քաղաքապետ, «Եվրոպական Վրաստան» կուսակցության ղեկավարներից մեկի՝ Գիգի Ուզուլավայի ձեռք բերված ընդդիմությունը հրաժարվեց բանակցությունների սեղանի շուրջ քննարկել «Վրացական երազանքի» ընտրական օրենսգրքի նոր խմբագրումը, ըստ որի, 77 համամասնական մանդատների թիվն ավելացվում էր մինչև 100, իսկ մեծա-

մասնական պատգամավորների թիվը նվազեցվում՝ հասցնելով 50-ի, սակայն ընդդիմությունը դեմ է այս առաջարկին: Մեկնաբանելով կառավարող կուսակցության նոր առաջարկությունը՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալալվաձեն հայտարարեց, որ իշխանության առաջարկը արդար է, պրագմատիկ ու զիջողական, եւ հույս հայտնեց, որ ընդդիմությունը կվերադառնա ընտրական համակարգի վերաբերյալ բանակցությունների սեղան: - Անպայման անհրաժեշտ է համաձայնության հասնել կոնկրետ պայմանների եւ խաղի կանոնների շուրջ: Ովքեր կմնան այս ամենից դուրս,

դա արդեն ընդդիմության ապակառուցողականությունն է,- հայտարարեց Արչիլ Թալալվաձեն: Նրա խոսքով, 100/50-ի համակարգը էականորեն տարբերվում է 77/73-ից: - Այս առաջարկությամբ նշանակալի ավելանում են համամասնական մանդատները եւ համեմատաբար պակասում՝ մեծամասնականները: Ինչպես ասել ենք՝ չենք անդրադառնա 2024 թվականի ընտրություններին, որոնք ըստ սահմանադրության անցնելու են լրիվ համամասնական ընտրակարգով,- հայտարարեց խորհրդարանի նախագահը:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է 4,3 ՏՈՒԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) գտնում է, որ 2020 թվականին Վրաստանի տնտեսությունը կաճի 4,3 տոկոսով: Բացի այդ, հիմնադրամի կանխատեսմամբ, գնաճը ծրագրված է 3 տոկոսանոց ցուցանիշին կհասնի մինչև տարեկան: ԱՄՀ-ն բարձր է գնահատում նաեւ Վրաստանի ազգային բանկի կողմից դրամավարկային քաղաքականության խստացումը: Նախնական գնահատականներով, 2019 թվականին տնտեսական աճը կազմել է 5,2 տոկոս, ինչը բարձր է ԱՄՀ-ի՝ 4,6 տոկոս կանխատեսումից:

ԹԲԻԼԻՍԻԻ ԲՅՈՒՋԵՆ ԱՎԵԼԱՑԱԿ

31 կողմ եւ ոչ մի դեմ ձայնով Թբիլիսիի քաղաքային սակրեբուլոն հաստատեց մայրաքաղաքի բյուջեում նախատեսվող փոփոխությունները: Թբիլիսիի բյուջեն ավելացել է 217 միլիոն լարիով (75 667 759 դոլար) եւ սահմանվել մեկ միլիարդ 239 միլիոն լարիով (432 038 496 դոլար): Քաղաքային սակրեբուլոնի մեծամասնության անդամների խոսքով, բյուջեի մեծ մասը կհատկացվի հին, դեղին ավտոբուսների փոխարինմանը եւ ավտոպարկի նորացմանը:

ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԾԱԼԿԱՅՈՒՄ

Քվեմո Քարթլիի շրջանում, Ծալկայի մուկիցիպալիտետի Գումբաթ գյուղում բացվել է կաթի վերամշակման ձեռնարկություն: Միջավայրի պաշտպանության եւ գյուղատնտեսության նախարարության տեղեկությամբ, ժամանակակից չափանիշներով հագեցած ձեռնարկությունը, «Միացյալ ագրոնախագծի» շրջանակներում, ստեղծվել է Վալերի Կախաձեի կողմից՝ պետության ֆինանսական աջակցությամբ: Ձեռնարկությունում իրականացվել է մոտ 500 000 լարիի ներդրում, այստեղից 170 000 լարին արտոնյալ ազրովարկ է: Ձեռնարկությունում վերամշակում են միջինը 8 տոննա կաթ եւ պատրաստում երեք տեսակի պանիր: Այստեղ աշխատում է 24 մարդ: Ապրանքն իրացվելու է տեղի շուկայում: Ինչպես նշում են գյուղատնտեսության նախարարությունում, 2013 թվականից մինչ օրս, պետության օգնությամբ, «Միացյալ ագրոնախագծի» շրջանակներում, Քվեմո Քարթլիի շրջանում գործարկվել է 23 նոր ձեռնարկություն:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՊԱՏԺԱԺԱՄԿԵՏՆ ԱՎԱՐՏՎԵՑ. ՎԱՆՈ ՄԵՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԼՔԵՑ ՄԱՏՐՈՍՈՎԻ ԲԱՆՏԸ

Փետրվարի 20-ին լրացավ Վրաստանի նախկին վարչապետ եւ ներքին գործերի նախկին նախարար Վանո Մերաբիշվիլու պատժաժամկետը: Նա լքեց Թբիլիսիի այսպես կոչված Մատրոսովի բանտը՝ քրեակատարողական հիմնարկը:

Այսպես կոչված Մատրոսովի բանտի մոտ էին հավաքվել նրա մեծամտորները եւ աջակիցները: Վանո Մերաբիշվիլին ձերբակալվել էր 2013 թվականի մայիսին: Նրա նկատմամբ ընդհանուր դատարանները կայացրել էին մի քանի դատավճիռ, այդ թվում «Ակուրա» գինու գործարանի ապօրինի բռնագրավման գործով՝ երկու տարի եւ երեք ամիս, Սանդրո Գիրգվաժիանու

գործով ապացույցներ բացցնելու համար՝ երեք տարի, 2011 թվականի մայիսի 26-ի հանրահավաքի ցրման գործով՝ չորս տարի վեց ամիս, ընտրողներին կաշառելու գործով՝ հինգ տարի, Վալերի Գելաշվիլու վրա հարձակման գործով՝ վեց տարի եւ ինն ամիս: Պատժի ներշնչման սկզբունքով, Վանո Մերաբիշվիլին դատապարտվեց 6 տարի 9 ամիս ժամկետով:



Ներկայումս դատարանը նրա դեմ քննարկում է նոյեմբերի 7-ի հանրահավաքը ցրելու եւ «Իմեդի» հեռուստատեսությունը ներխուժելու գործերը: Ազատ արձակվելուց հետո, Վանո Մերաբիշվիլին հայտարարեց, որ ակտիվորեն ներգրավվելու է ներկայիս իշխանության դեմ պայքարին:

ԳԻՐԳԻ ՎԱՆՈՒՄ. «ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՊԱՍԱՆ ՓՈՐՁԸ ՈՉԵՂԻ ԶԻ ԴԱՆԳԵՑՆԻ»

Մեկնաբանելով բանտից ազատ արձակվելու ժամանակ Վրաստանի նախկին վարչապետ Վանո Մերաբիշվիլու իշխանության տապալման մասին հայտարարությունը՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան նշեց, որ «Ազգային շարժումը» բազմիցս արել է իշխանության տապալման փորձեր, եւ երբեք ոչինչ չի հաջողվել, այսուհետ եւս չի հաջողվի: - Այսօր, ընդհանրապես չէի պատրաստվում խոսել այս թեմայով, սակայն մեկ անգամ եւս հաստատվեց, որ «Ազգային շարժումն» անցյալ է, մենք պետք է մտածենք վաղվա մասին, որպեսզի այս երկիրը լինի ոչ թե մարտահրավերների ու տապալումների, այլ՝ երիտասարդների համար հնարավորությունների երկիր,- հայտարարեց վարչապետը:

դառնում, որ նա ժամանակի եւ տարածության մեջ կորել է: Սպասենք, հասնի ընտանիքին, պարզի, թե ինչ իրականություն է, ինչ է տեղի ունենում եւ հետո կլսենք,- հայտարարեց Կախա Կալաձեն:

ԳԻԳԻ ԲՈՒԿԵՐԻՆ. «ՎԱՆՈՆ ՔԱՐԲԱՆՏԱՐԿՅԱԼ ԵՐ»

Ըստ «Եվրոպական Վրաստան» կուսակցության ղեկավարներից Գիգի Բուկերիայի, Վանո Մերաբիշվիլին քաղաքացիական պարկյալ էր: - Քաղաքական պատվերով ոչ մեկը բանտ չպետք է նետվի, բոլոր դեպքերում պետք է պահպանվի օրենքի գերակայությունը,- ասաց Բուկերիան:

ՄԱՍՈՒԿԱ ԽԱԶՈՐԱԶԵ. «ՆՐԱ ԴԵՑ ԴԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՄ»

Քաղաքական «Լեյո» շարժման հիմնադիր Մամուկա Խազարաձեն, մեկնաբանելով Վանո Մերաբիշվիլու իշխանության տապալման մասին հայտարարությունը, նշեց, որ կտրակաճապես դեմ է այնպիսի հայտարարությունների, որոնք բռնության կոչ են պարունակում: Նրա խոսքով, երկիրը մեկընդմիջ պետք է անցնի ընտրությունների նորմալ պայմանակարգի, որտեղ չեն լինի կեղծումներ, սպառնալիքներ, կարտոֆիլով գնված ձայներ:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԿՄԱՍՆԱԿՅՈՒՆ ԱՐԴՅՈՔ, ՄԵՐԳԵՅ ԼԱՎՐՈՎԸ ԵՎՐԱՍՏՈՐՇՐԳԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՀԱՎԱՔԻՆ...

Ինչպես արդեն հաղորդել ենք, ընթացիկ տարվա մայիսին, Վրաստանը՝ որպես Եվրախորհրդի նախագահող երկիր, Թբիլիսիում իյուրընկալելու է Եվրախորհրդի նախարարների միասուր:

Որպես Եվրախորհրդի անդամ երկիր՝ միստի աշխատանքին մասնակցելու է նաեւ Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարարության ներկայացուցիչը: Տարածված լուրերի համաձայն, Ռուսաստանի պատվիրակությունը գլխավորելու է արտգործնախարար Սերգեյ Լավրովը: Տվյալ պարագայում առկա է մի հանգամանք. բանն այն է,

որ Սերգեյ Լավրովը Աբխազիա եւ Յիսինվալիի տարածաշրջան կատարած իր ուղեւորություններով խախտել է Վրաստանի օկուպացիայի մասին օրենքը, որի համաձայն, խախտողը ձերբակալվում է կամ տուգանվում խոշոր չափի գումարով: Այս առիթով, Վրաստանում տարակարծության եւ բուռն քննարկումների ալիք է բարձրացել: Տար-

բեր հայտարարություններ են անում Վրաստանի քաղաքական գործիչները, ընդդիմությունը խոստանում է՝ թույլ չտալ Լավրովին մուտք գործել Վրաստանի տարածք: Ռուսաստանի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան, «Կոմսոմոլսկայա պրավդա» ռադիոկայանի ուղիղ եթերում, անդրադաձել է Վրաստանի ներքաղաքական իրավիճակին եւ կապել այն արտգործնախարար Լավրովի՝ Վրաստան հնա-

րարել է Մարիա Զախարովան: Նրա խոսքով, Ռուսաստանը Վրաստանն ընկալում է որպես ինքնիշխան պետություն՝ իր շահերով հանդերձ: - Քանի դեռ Վրաստանի ներքաղաքական վիճակը կախված կլինի նրանից, թե ով կծամանի Ռուսաստանից, կլինեն բազմաթիվ խնդիրներ: Չպետք է նախարարներ կամ իշխանություն փոխվի այն պատճառով, թե ով է այցելում Վրաստան,- նշել է Զախարովան: ՄԻՄՈՆ ԿԻԼԱԶԵ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԶԻԼ ԹԱՆԱԿՎԱԶԵ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ԲՈԼՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

փուլը ներգրավված էր օրենսդրական նշանակալից փաթեթների թվում, որի շուրջ անցյալ տարի օրենսդիր մարմինը աշխատեց ակտիվորեն:

- Ավելացել են արդարադատության գերագույն խորհրդի գործունեության թափանցիկությունը ու հաշվետվությունը, խորհրդի ինքնությունը, կատարելագործվել է դատավորների կարգապահական իրավական ընթացակարգը: Իրականացված բարեփոխումներն արժանացել են բարձր գնահատականների Միացյալ Նահանգների, Եվրամիության, Եվրախորհրդի եւ մեր մյուս գործընկերների կողմից,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԸ ՆՊԱՍԵՑԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՈՎԱԶՆԹԱՑԻՆ

Խորհրդարանի գործունեության տարեկան հաշվետվության ներկայացման ժամանակ, օրենսդիր մարմնի ղեկավարն անդրադարձավ հարկային օրենսգրքում իրականացված փոփոխություններին: Նրա խոսքով, հարկային բարեփոխումները, որոնց շնորհիվ գործարարների համար արտադրությունների վերավարկավորման նպատակով, սահմանվեց գրոյական հարկային աշխատակարգ, թույլ տվեց այդ մոդելի կիրարկման օրվանից մասնավոր հատվածի համար տնտեսել 1,2 միլիարդ լարի, ինչը, բնականաբար, նպաստում է էկոնոմիկայի զարգացմանը:

- Մենք օրենսդրությամբ մեկ տոկոսով նվազեցրինք փոքր եւ միջին գործարարների հարկը եւ մշակեցինք նորարարական գործարարության ու ստարթափերի ֆինանսավորման մեխանիզմներ,- ընդգծեց Արչիլ Թալակվաձեն:

ԲՅՈՒՋԵՆ ՈՒՂՎԱԾ Է ՄԱՆԿԱՎԱՐՔՆԵՐԻ, ԶԻՆՃԱՌԱՅՈՒՆՆԵՐԻ, ՀՐՇԵՋ ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՁԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍԵՑՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆԸ

- Մեր նպատակն է, որ խորհրդարանը վերածվի յուրաքանչյուր քաղաքացու ինստիտուտի, եւ մեր կողմից ընդունված օրենքները նպաստեն քաղաքացիների կենսամակարդակի բարձրացմանը,- փետրվարի 18-ին խորհրդարանի գործունեության մեկամյա արդյունքների հանրագումարմանը հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն: Նա հիմնական շեշտը դրեց օրենսդրական այն փաթեթների վրա, որոնք նրա գնահատմամբ, ուղղված են երկրի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը: Արչիլ Թալակվաձեն հիմնականում կանգ առավ 2020 թվականի պետքային վրա:

- Վրաստանի խորհրդարանը կառավարության հետ, մշակեց եւ ընդունեց 2020 թվականի պետքային, որը գլխավորապես ուղղված է սոցիալական հարցերի կարգավորմանը, երկրի տնտեսական զարգացման խրախուսմանը: Մասնավորապես, ավելացրինք տարիքային կենսաթոշակները եւ մինչեւ 18 տարեկան կարիքավորների սոցիալական նպաստները: Ընդունված փոփոխությունները վերաբերում են մեր 880 հազար համաքաղաքացիներին: Հուլիսի 1-ից բժշկական շտապօգնության եւ գյուղական բժիշկները կստանան ավելացված աշխատավարձ (շուրջ 8 հազար մարդ): Հուլիսի 1-ից ավելացած աշխատավարձ կստանան նաեւ զինծառայողները, հրշեջ-փրկարարները, ոստիկանները եւ նրանց հավասարեցված անձինքը (շուրջ 66 հազար մարդ): Բռնազորավածներին բնակարարաօգնությունով ապահովելու նպատակով, բյուջեից հատկացվել է 122 միլիոն լարի: Հանրային դպրոցների ավագ, առաջատար եւ մենտոր ուսուցիչները նոր ուսումնական տարվանից կստանան 150 լարիով ավելացված աշխատավարձ (ավելի քան 43 հազար մարդ): Սեպտեմբերի 1-ից մանկապարտեզների դաստիարակները եւս կստանան ավելացված աշխատավարձ (32 հազար մարդ): Հանրակրթական ենթակառուցվածքների բարելավման նպատակով, բյուջեով նախատեսված է 280 միլիոն լարի, տրանսպորտային եւ հասարակական ենթակառուցվածքի զարգացման համար առանձնացվել է ավելի քան 3,7 միլիարդ լարի: Բնականաբար, դա կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, տնտեսական աճի խրախուսմանը: Փոքր եւ միջին գործարարության աջակցության նպատակով, 2020 թվականի բյուջեից առանձնացվել է 240 մի-

լիոն լարի: Դա եւս կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Տարածաշրջանների զարգացման համար բյուջեով նախատեսված է ավելի քան 350 միլիոն լարի: 90 միլիոն լարիով ավելացվել է Թբիլիսիի բյուջեին,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն:

ԱՅՍՕՐ ԸՆԴՊԻՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՐ ԿԱՆ ՄԱՐԴԻԿ, ՈՎՔԵՐ ՌՈՒՄ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՇՏՈՒՄ ԹՈՂԵՑԻՆ ՄԵՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ԽԱՂԱՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեի օրենսդիր մարմնի գործունեության մասին ամենամյա հաշվետվությունն ընդհատվեց ընդդիմության պատգամավորների մուտքով, որոնք նիստերի դադարեցում ձայնավորով միացրին խորհրդային Միության օրհներգի ձայնագրությունը:

- Ես հենց հիմա խոսում էի մեր տարածքների օկուպացման մասին, եւ ահա ժամանակին այստեղ են հայտնվում ընդդիմության ներկայացուցիչները: Մեր ընդդիմության մեջ մինչ օրս մնում են մարդիկ, որոնք ժամանակին Ռուսաստանի ընկերություններին են վաճառել Վրաստանի ռազմավարական օբյեկտները, որոնք մարտի դաշտում են թողել իրենց զինվորներին եւ խաղաղ բնակչությանը, ստորագրել են Եվրոպայի խորհրդի բանաձեւը, որը վրացական կողմին մեղադրել է Ցիխնվալիում ռազմական գործողություններ սկսելու մեջ,- ասաց Արչիլ Թալակվաձեն եւ հավելեց, որ քաղաքական ընդդիմության ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել նաեւ Ռուսաստանի քաղաքական ղեկավարների հետ, իսկ այսօր Վրաստանում Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նիստի անցկացման հարցի կապակցությամբ կտրուկ հայտարարություններ են անում:

ԸՆՏՐՎԱԿԱՆ ՕՐԵՆՏԱԳՐԻ ՇՈՒՋ ՀԱՍՏԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԵԼ ԱՆՐԱՊԵՇՏՈՒԹՅՈՒՆ Է

Խորհրդարանի գործունեության ամենամյա հաշվետվության մեջ խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն մանրամասն կանգ էր առել ընտրական օրենսգրքի փոփոխությունների շուրջ կառավարող կուսակցության եւ միացյալ ընդդիմության միջեւ տարվող բանակցային գործընթացի վրա՝ հայտարարելով, որ այդ հարցում ընդդիմությունը սուբյեկտիվ ապակառուցողական դիրքորոշում է գրավել:

- Իրականությունն այն է, որ «Վրացական երազանքի» կողմից ազգային շահերի եւ արժեքների վրա հիմնված եվրոպական սահմանադրության մշակման մասին 2017 թվականին տրված խոստումը «երազանքը» կատարեց 2018 թվականին,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն եւ հավելեց, որ ինչպես պայմանավորվել են, ընտրական համակարգի փոփոխումը կկայանա 2024 թվականին, եւ նման որոշում երկրի նորագույն պատմության մեջ առաջին անգամ ընդունել է ձեւակերպել է այսօր իշխանության գլուխ կանգնած կուսակցությունը:

- Մեր կողմից ներկայացվեց փոխգիշույն. 100/50 համապատասխանությունը միանգամյա անցումային տեսքով կկիրարկվի 2020 թվականին, որը էականորեն տարբերվում է գործող 73/77 տարբերակից: Այս տարբերությունը շատ ավելին է, քան խորհրդարանում ներկայացված է ամենամեծ ընդդիմադիր կուսակցությունը: Մեր ընդդիմախոսները հայտարարում են, որ «ցանկացած մոդելով իրենք կհաղթեն ընտրությունները»: Եթե այսպես է, ապա անհասկանալի է, թե ինչու չեն համաձայնվում այս առաջարկությանը: Ընդդիմության մի մասը համոզված է, որ իրենց կուսակցությունները լայն աջակցություն ունեն, իսկ կուսակցությունների ղեկավարներին մարդիկ վստահում են: Նման հայտարարություններ շատ են արվում: Եթե այդպես է, ապա ինչու չեն ցանկանում մասնակցել մեծամասնական ընտրություններին: Հուսով եմք, որ տարբերվող փաստարկների հանրագումարում կանցկացվի եւ վերջնական որոշում կընդունվի,- նշեց Արչիլ Թալակվաձեն եւ շնորհակալություն հայտնեց կառավարող կուսակցության ու միացյալ ընդդիմության միջեւ բանակցային գործընթացը կազմակերպած Միացյալ Նահանգների, Գերմանիայի, Եվրամիության դեսպանություններին, Եվրոպայի խորհրդի ներկայացուցչությանը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ. «ՄԻ ՔԻՉ ԷԼ ՀԱՄԲԵՐԻՐ, ՍԻՐԵԼԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍ...»



Մայրաքաղաքի Ազատության հրապարակում գտնվող Ա.Գրիբոյեդովի անվան ռուսական դրամատիկական թատրոնի շենք, ուր ժամանակավոր գործում են ադամյանցիները, 164-րդ թատերաշրջանի մանրամասներին ծանոթանալու են եկել վերջին անգամ: Քանի որ 165-րդ հորելյանական մասին, խոսելու ենք արդեն ու կրկին Հավաքարում, Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի նորակառույց շենքում: Ինչպես բազմիցս նշել ենք «Քարթու» հիմնադրամի կողմից հիմնովին վերակառուցվող պետհաղորամայի շենքն ըստ նախագծի շահագործման է հանձնվելու տարեվերջին: Արդեն 2021 թվականին, ամենաին հայոց թատրոնը մեծ շուքով բացելու է իր պատմության նոր էջը, նոր շենքում:

Իսկ մինչ այդ երանելի պահը, ադամյանցիները շարունակում են հարստացնել իրենց խաղացանկն առաջնախաղերով ու հյուրախաղերով, որոնցից առաջինը՝ Եգիպտոս է, մայրաքաղաք Կահիրե: Թատրոնի գեղարվեստական ղեկավար ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆԻ հետ զրուցեցինք ադամյանցիների այս եւ այլ ծրագրերի մասին:

- Պարոն Բայանդուրյան, ե՞րբ եք մեկնում Կահիրե, ի՞նչ եք տանում:
- Նախ, ուրախությամբ ասեմ, որ հյուրախաղերը Եգիպտոս առաջինն են վիրահայոց թատրոնի կենսագրականում: Մեկնում ենք գարնանը, տեղի Հայ Առաքելական եկեղեցու թեմի հրավերով: Եվ հենց նրանց խնդրանքով տանում ենք Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբարը»: Կատակերգությունը մեր թատրոնի խաղացանկում հնգերից է, առաջին անգամ բեմադրվել է Թիֆլիսում, 1921 թվականին, Իսահակ Ալիխանյանի կողմից: Վերաբեմադրեցինք անցած 80-90-ականներին: Իսկ 2009-ին հանդիսատեսը ծանոթացավ «Պաղտասար աղբարի» իմ բեմադրությանը: Հույս ունենք, Կահիրեի հայ համայնքը նույնպես կսիրի մեր մեկնաբանությամբ դասականի այս գործը:

- Փաստորեն, տարին հետաքրքիր է սկսվում...
- Ավելի ճիշտ, շարունակվում: Մենք այդքան խաղացել ենք Վրաստանի Քվեմո Քարթլի տարածաշրջանի հայաբնակ ութ գյուղերում՝ ներկայացնելով «Շնորհավոր Նոր տարին»: Ուրախացել ենք երեխաների հետ ու այդ դրականով հունվարի 27-ին բացել մեր նոր թատերաշրջանը՝ շատ հետաքրքիր օր ու ամիսների սպասումով:

- Ի՞նչ է կատարվում այս պահին «կուլիսներում»:
- Փետրվարի 23-ին ունենք պրեմիերա: Ա.Գրիբոյեդովի անվան ռուսական դրամատիկական եւ Թավիսուֆալի (Ազատ) թատրոնների գեղարվեստական ղեկավար, արդի վրաց թատերաշխարհի հեղինակավոր ռեժիսոր Ավթո Վարսիմաշվիլին բեմադրում է իր հեղինակային պիեսը՝ «Հրեշտակն ու երեք փողկապավորները»՝ գրիբոյեդովյան բեմին:

- Ի դեպ, հետաքրքիր ավանդույթ է ձեւավորվել վիրահայոց թատրոնում, անցած տարի նույնպես հրավիրվեցին վրացի ռեժիսորներ...
- Ավանդույթը միշտ արժեք է պարունակում եւ այս պարագայում նույնպես: Նախորդ թատերաշրջանում Թբիլիսիի Ե.Գուրբաձեի անվան պատանի հանդիսատեսի թատրոնի գեղարվեստական ղեկավար Դիմա Խվիսիաշվիլին բեմադրեց «Գլխավոր դերը», իսկ ճանաչված ռեժիսոր Լեւան Սվանաձեն «Ի՞նչ էր պատահել գազանանոցում» պիեսը: Այսպիսի սերտ կապ, որ ձեւավորվել է ադամյանցիների ու վրաց թատրոնի միջեւ, տանամայակներ չի եղել: Վրացի ռեժիսորները նոր, տարբերվող շունչ են բերում մեր թատրոն, մեր դերասանները իրենց այլ ոճում են փորձում, իսկ հանդիսատեսը ծանոթանում է ռեժիսորական նոր մոտեցմանն ու ձեռագրին: Բացի այդ, բեմադրություններ կայացնող յուրաքանչյուր վրացի ռեժիսոր իր հետ նաեւ վրացի հանդիսատես է բերում՝ թատերագետների, ակադեմիկների, արվեստի մարդկանց, սա նոր հորիզոններ է բացում մեր դերասանների առաջ, նպաստում նրանց ինտելեկտուալ վրաց թատերաշխարհի:

- Ու նաեւ այլ բեմերում խաղալով, չէ՞ որ, ասում են, բեմը նույնպես իր ոճն ու բարքն է թելադրում:
- Երբ բեմ ես բարձրանում, դա իսկապես զգում ես: Ադամյանցիները, սեփական շենքի բացակայության պայմաններում միայն անցած տարի խաղացին 45 ներկայացում, Վրաստանի գրեթե բոլոր թատրոններում, այդ թվում՝ այնպիսի հզորների, ինչպիսիք են Ռուսթավելու, Մարջանիշվիլու, Գրիբոյեդովի, նաեւ Հայաստանի ու արտերկրի նշանավոր բեմերում... մի խոսքով, աշխատել ենք ու քաղել հնարավորինը:

- Միայն անցած թատերաշրջանում ունեցաք ութ պրեմիերա, որո՞նք են տարվա ակնկալիքները:
- Ուրախ եմ, որ քիչ կամ շատ բոլորն էլ ընդունվեցին հանդիսատեսի կողմից: Այժմ պատրաստվում ենք նոր ներկայացումների: Թատրոնի ռեժիսոր Ռոման Մաթիաշվիլին բեմադրում է արդի արձակագիր եւ դրամատուրգ Ադամ Ավագյանի «Դիպլոմատ» եւ Կարինե Խոջիկյանի «Հրավիրված եք ծնունդի», իսկ Լեւոն Ուզունյանը՝ ռուս ժամանակակից դրամատուրգ Ելենա Սկորոխոկովայի «Մի քափիր գետինն մոխիրը» պիեսները: Այս տարի Երեւանում ուսումն են ավարտում նաեւ մեր թատրոնի դերասաններ եւ, հուսով եմ, ապագա ռեժիսորներ Լյուբա Սահակյանը, Արթուր Գասպարյանը եւ Գիորգի Թերթանյանը, որոնք եւս իրենց ձեռագիրն են բերելու թատրոն:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)